

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St. New York, N. Y. Vol. IV, 1894



ԱԽԱԼՅԵՍՑԻ ՀԱՅՈՒՀԻ Armenian of Akhaltzikh
Արտատպեալ A Travers L'Armenie Russe էն

ԲՈՎԵՆԴԱՅԻՆԻՍԻՆ

Պատկեր Ախալցխայի հայուհւոյ.— հայկ. հոգեբանութիւն. Ազգային Դաւանանք «Հայքի» — Ընդ Ռուսահայաստան. Ֆուսսացուհի մը հայուհեաց մասին.— «ՀԱՅՔ».— Վարդան Մամիկոնեան.— Նամակ Խնուսէն.— հանդէս Տարեդարձի Վեճափառ հայրիկի. Ի Պոսթըն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՅԻՆՆԱՐ

«ՀԱՅՔԻ»

Յեղ ցեղէ և ազգ ազգէ գանազանող արտաքին տարբերութիւնք, ֆիզիքական կազմութեան, գունայ, բարուց, կրօնից և կառավարութեան աննմանութիւնք արտայայտիչ միայն են այն խորին և էական տարբերութեան որ նոցա հոգեկամ կազմութեան մէջ կայ: Անգլիացին, Ֆուսսացին, Հնդկին, Չինն, Հրէայն, Հայն առանձին կերպեր ունին զգալու, խորհելու և գործելու, այսինքն իւրուրոյն ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻ*:

Մարդկութեան այլևայլութիւնն պէսպէս ազգութեանց ձեւին տակ՝ բնական է: Այն յառաջ եկած է կլիմայի և շրջապատողութեանց դարաւոր ազդեցութենէն ժողովրդոց վերայ, և հոգեբանական ու բնախօսական ժառանգութեան օրինաց շնորհիւ՝ տարբերութեանց սերնդէ Ի սե-

*«Ազգային Հոգին» պէտք է չփոթել «Ազգային ոգի» բացատրութեան հետ: Ա. Հոգի բնաւորութեան ազգային խառնուածն, մտքի ազգային կազմութիւնն կը նշանակէ: Իսկ Ա. ոգի ունենալն ազգին, հանրութեան գործերուն նախանձաւոր և հոգածու լինիլ է: Ա. Հոգի ժառանգած անհատի մի մէջ կրնայ մոլութեանց կամ անկրթութեան կամ մոլոր կրթութեան պատճառաւ ազգային ոգի չգոյանալ և ազգ. Հոգին ալ եղծանիլ:

րունդ փոխանցումէն և հաւաքումէն: Ազգութիւնն գիտական և իմաստասիրական փաստերով քաջ կ'ապացուցուի լինիլ տիեզերի կազմական ծրագրին որոշ մէկ տրամադրութիւնն և մարդկային զարգացման հզօրացոյն գործօններէն մին:

Մարդկութիւնն անմիօրինակ քայլերով և զանազան շաւիղներով յառաջ կ'երթայ դէպ ի կատարելութիւն, և իւր բարձրագոյն խոհական իրագործելու համար՝ աշխատանքի բաժանման իմաստուն կերպըն ընդունած է բնականօրէն, յանգագատից: Ամեն ազգ, այսինքն որոշ հոգեկան կազմութեան հաւած ամեն ազն, իւր մասնաւոր գիտակետէն նայելով կարող կը լինի վեհ խոհականին այս ինչ կողմն քան զայլ ազգս աւելի յատկօրէն նըմարել և իւր կենօք բացատրել. նա այսպէսով ընդհանուր քաղաքակրթութեան բարդ և բարձր շինուածին կ'ընծայէ այս նիչ կամ այն ինչ տարրն քաջ պատրաստուած, քաջ եփուած ու կազմուած իւր Ազգային Հոգւոյն մէջ:

Մարդկային բարձր ցեղերու առանձին Հոգւոյն մէջ այս եղանակաւ պատրաստուած պէսպէս տարբերաց վերջապէս ի մի բարդուելովն է որ Եւրոպիոյ արդի գերազանց քաղաքակրթութիւնն կրցած է յօրինուիլ, որպէս կը բացատրէ կիզոյ: Ապագայի ևս գերազանց քաղաքակրթութիւնն ալ նոյն հնարքով, կ'երեւի թէ, պիտի կրնայ նիւթուիլ. ասիական Հոգին պիտի ընծայէ իւր մասնաւոր տարրն, եւրոպականն զիւրն՝ և երկուց ինամութենէն ու խառնումն պիտի ծնանի վեհագոյն քաղաքակրթութիւն մի:

Եւ չեմ ընդունիր կիւսդավ լը Պօնի յոռետես այն հայեցողութիւնն թէ ազգք տարբեր Հոգի ունենալով՝ զիրար չեն հասկանար և միմեանց դէմ ցեղային պատերազմներ կը մղեն: Պատերազմներն անհամաձայնութենէ և անհասկացողութենէ չեն ծագիր, թէ և այնպէս թուին երեսոանց, այլ յառաջ կուգան մէկ կողմին կամ երկուց կողմանց անիրաւութենէն և անբարոյականութենէն: Ընդհակառակն, ազգ ազգի կարող եղած է հաղորդել իւր փորձառութեանց իմաստնագոյն եղբակացութիւններն և իւր կենաց բարեգոյն արգասիքն, երբեմն պատերազմն ու յաճախ վաճառականութիւնն բացած լինելով հաղորդութեան դռներն:

Ես կը հաւատամ ուրեմն ազգութեան, և կը ՀԱՒԱՏԱՄ ՀԱՅՈՒԹԻՒՆՈՒՆ: Ազգային Պատմութեանն կը տեսնեմ թէ Հայք անգոյն և բարբարոս հոգի ունենալէ շատոնց դադարած և ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԻ կազմել կրցած են: Կը տեսնեմ նաև թէ այդ Հայկական Հոգին առաջին կարգի է: Նորագերազանցութեան մէկ դադանիքն յայնմ է թերեւս, որ իւր աշխարհագրական դժրից և իւր ցեղային ընդունակութեան չընորհիւ թէ՛ Ասիական և թէ՛ Եւրոպեան ազգաց քաղաքակրթական տարրերէն ընդունած լինելով, երկուքի՛ն ալ յատկութիւններն յանձին բարդելու և հզօր և մեծ Հոգի մի կազմելու վերայ եղած է: Հայկական այդ վեհ Հոգին դեռ իւր բովանդակ գարգայումն ու հաստատութիւնն չառած, քաղաքական պայմանք յեղափոխեցան և Հոգւոյն կատարելագործումն դադարեցաւ գծաղղաբար:

Քննելով եւս ներկայ անհատներու տեսակներն, կը տեսնեմ թէ հայկական Հոգին դեռ բոլորովին լուծուած՝ մեռած չէ: Արաքին յուսի ազդեցութեանց և քաղաքական աննպաստ պայմանաց ներքեւ տըկարացած, ախտաւորած է այն, սակայն չէ մեռած: Կը համարձակիմ նաև ասել թէ Հայկական Հոգւոյ այն ախտերն որոց մասին յաճախ խօսուած է, և որք ազգային պատմութեան հին դարերուն մէջ ալ նշանակելի են, ինձ քաջալերական երեւոյթ կը թուին երբ կը մտածեմ թէ նոքա Հայ Հոգւոյ յատուկ գերազանցութեանց ցուցիչք են— իսկապէս վեհ և հզօր բնաւորութեան ախտերն են: Անմիաբանութեան, ապստամբութեան, պառակտման երեւոյթներն անկախութեան, ազատութեան, անձնական դատողութեան հոգի կը նշանակեն, թէեւ ախտաւորեալ վիճակի մէջ: Եթէ երբէք մեր ազգային պատմութեան իմաստասիրութիւնն զըրուի, պիտի ապացուցուի թերեւս թէ ոմանց նախանձն, անմիաբանութիւնն, հետեւին, ամբարտաւանութիւնն ունէր այլ սակաւուց մէջ իւր առողջ, ազնիւ և բարձր նախասիրքն:

Այս տեսութեան մէջ աւելի ևս կը հաստատուիմ մտածելով թէ ասիական հոգին հնազանդութեան և հպատակութեան հոգին է: Ասիական բարոյականի համաձայն՝ անհատին բարձրագոյն առաքինութիւնն է իւր կրօնական և քաղաքա-

կան գլխոց հպատակիլ, մեծին ենթարկիլ անպայման կերպիւ: Արեւմտեան կամ Եւրոպեան հոգին է անհատին ազատութեան, ինքնիշխանութեան, անձնական դատողութեան և ինքնայարգութեան հոգին: Այդ երկուքն խնամեցած են Հայկական Հոգւոյն մէջ, և ամեն անգամ որ Հայ անհատի մի Հոգին հզօրապէս կազմուած չէ և երկու տարրերն ներդաշնակեալ չեն, անկախութիւնն ապստամբութեան կը փոխուի, ինքնայարգութիւնն ամբարտաւանութեան, անձնական դատողութիւնն յամառութեան, մեծագործութեան սէրն սուռցիկ մեծախօսութեան:

Կը հաւատամ ուրեմն թէ Հայ Ազգին հնարաւոր է իւր ապագայ կեանքով օժանդակել համամարդկային քաղաքակրթութեան. ոչ միայն իւրացունել եւրոպեան բարձր քաղաքակրթութիւնն, այլ և իւր կողմանէ օգնել նմա քայլ մ'առնելու դէպ ի նոր և բարձրագոյն աստիճանն գարգացման:

Հոգեբանական այս ընդհանուր տեսութեան վերայ կը հիմնեմ հետեւեալ տառներկու յօդուածներն:

Ա. ՄԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՆԵՐ ԿԱՄ ԻՄԷՏԱԿԱՆՆԵՐ Ե՝ ԻՆՔՆԱՎԱՐ ԺԱՂԿԵԼՈՎ՝ մարդկութեան ընծայել քաղաքակրթութեան բարձրագոյն յարադրութիւն մի, գէթ նոր տարրեր, կամ նորոգ և պայծառաւոյն քացատրութիւններ, և այսպէս սրժանանալ մեր կողմանէ բան մի հանգանակելու աիեգերական գարգացման: Տիեզերական պատմութեան մէջ ճշմարիտ մասն և մնայուն յիշատակ ունենալու միակ պայմանն այդ է: Ազգ մի որքան երկար դարեր ալ որ ապրի, դարձեալ վիժած մ'է նա եթէ չյաջողի մարդկութեան ճշմարիտ իտէականին իրականացման օգնելու:

Բ. Հայ Հոգին իւր կազմութիւն կատարելագործելու և իւր վերջնական ազնիւ արգասիք տալու համար պէտք է որ Հայք զՀայաստան վերակազմել յաջողին: Առանց հայրենիքի չկայ ազգային կեանք, և առանց ազգային կեանքի Ազգային Հոգին կը լուծուի և կը մեռնի: Այժմու կազմալուծեալ պայմանաց մէջ հնար չէ Հայ Հոգւոյն զօրանալ և ճշմարտապէս հայ քաղաքակրթութեան ու և է աարք մշակել: Ուրեմն պարտիմք հնարիլ ելնել այս ըստրուկ վիճակէ և վերակազմել զՀայ հայ-

րենիք :

Գ. Հայոց կրօնն, լեզուն, անգիր զըրոյցք, առածք, բարք, գրականութիւն, կառավարական յարադրութիւն (systeme) ամենայն կը կրեն Հայ Հոգւոյ դրոշմն եթէ իրօք ազգային են կամ ազգային դարձած են : Հայոց Պատմութեան իմաստասիրութիւնն գրողին վերապահեալ է ապացուցանել թէ Հայաստանեայց եկեղեցին, Հայոց Պետութիւնն, լեզուն և այլն արգարե կը կրէին և կը կրեն դեռ Հայ Հոգւոյ կրնիքն, և յաջողեալ փորձեր էին արեւելեան և արեւմտեան յատկութիւններն բաղադրելու և լծակցելու :

Դ. Հայ եկեղեցին, լեզուն, գրականութիւնն, ընտանիքն, կառավարութիւնն պէտք է վերաշինուին, բարեկարգուին ու զարգանան ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ. այլով բանիւ, ամենայն բարեկարգութիւնք պարտին Հայկական Հոգւոյ զարգացման աստիճաններուն զգուշաւոր և հաւատարիմ բացատրութիւնքն լինիլ որպէս զի ճշմարիտ ազգային յառաջդիմութիւն նշանակեն և զիկզքն առաջնորդեն դէպ իւր խէշականն :

Ե. Յառաջդիմութեան հայկական ուղիութիւնն ճանաչել և նշանակել յոյժ փափուկ գործ է, յոր բազումք կը միին, բայց ճշմարիտ իրաւունքն հազիւ սակաւք ունին : Այդ սուրբ իրաւունք ըստ մասին ժառանգական է և ըստ մասին ստացական : Ժառանգական մասին համար պէտք է գիտնալ թէ ամեն ով որ հայ կը ծնի, հայ անուն և արիւն կը կրէ, մի և նոյն մտօք և չափով հայ չէ : Հայ կայ որ հազիւ հայ է, Հայութեան ստորի՛ն նմոյշ. և կայ ալ որ խորապէս հայ է, Հայկական Հոգի առատօրէն ժառանգած է, Հայութեան հըզօր և բարձր տիպար է : Ահա այնպիսին միայն ունի այն զարմանալի իմացական և զգացական խառնուածն որով ընդունակ է ճշմարիտ հայկական ուղիութիւնն գտնել. բայց այդ ժառանգական յատկութեան վերայ պէտք է աւելցուցած լինի հայկական դաստիարակութիւն և խոր մըշակութիւն և ուսում, որպէս զի կրթութեան շնորհիւ գիտնայ թէ Ազգին յառաջդիմել պէտք է, և Հոգւոյն շնորհիւ զգայ թէ Ազգն ո՛րպէս յառաջդիմել կարող է :

Զ. Այն որ թոյլ է իբրեւ հայ, կը չհայա-

մայ ուսումնական դառնալով, մանաւանդ օտար երկիրներու մէջ : Այնպիսւոյն Հայկան Հոգին բաւական հզօր չէ օտար գաղափարներն հայկականացունելու. փոխանակ ինքն զգաղափարն մարսելու, գաղափարք կը մարսեն կը հալեն իւր դէւրալոյժ. Հոգին : Նա այնուհետեւ լոկ մարմնով հայ է, իսկ Հոգւով ո՛չ ևս. նա իւր առջեւ ազգային ուղիութիւն ոչ կը փնտռէ և ոչ կարող է տեսնել. յաջս նորա ազգային ոչ ինչ կայ յարգելի, կ'ուզէ ամեն ինչ քահել, քանդել, բառնալ ի միջոյ և բոլորովին նորն ստեղծել :

Այն որ Հայութեան հզօր տիպ մ'է, յետ նախնական ազգային դաստիարակութեան, այսինքն իւր Հոգւոյն գիտակցութիւնն ստանալէ զկնի, որքան ալ ուսանի, և օտար հաստատութեանց մէջ ուսանի, կը մնայ հայ : Նա օտար անունդն քաջ կը մարտէ և իւր ներքին տեսակին կը վերածէ : Կը լսէ օտար ուսուցչաց ձայնն, ռակայն միանգամայն կը լսէ նաեւ իւր նախնեաց բազմութեան ձայնն ի խորս Հոգւոյն : Այն միլիոնաւոր Հայեր որք յընթացս դարուց հանգանակած են նորա Հոգին կազմելու, կ'ապրին նորա շնորհիւ մէջ, կը զգան, կը խօսին, կ'առարկեն, կը լուսաբանեն և կ'ուղղեն նորամուտ գաղափարներն : Այս գաղտնեաց շնորհիւ է որ նա չի վարակուիր այն մտային ախտերէ որք Հայկական Հոգւոյ մահացու են, և յորոց դիւրաւ կը բռնուի թոյլ հայ ուսանողն — մասնաւորապէս կ'ակնարկեմ աշխարհաքաղաքացութիւն և անկրօնութիւն կոչուած երկու ախտերուն : Հայութեան բարձր և ուժեղ տիպն որքան ալ որ ուսանի, որքան ալ որ իւր կրօնական տեսութիւնք լայնանան, նախապաշարմունք փարսալին, դարձեալ կը մնայ սաստիկապէս կրօնասէր, ջերմ գաղափարեան և խորապէս առտուածապաշտ : Նոյն ատեն, ըստ զարգացման աստիճանին, կը գարշի տղայական և սգէտ ազգային պարծանքէ, եւ կը հասկանայ թէ Հայութիւնն նպատակ չէ, այլ բնական եւ յարգելի միջոց է մանդկութեան ծառայելու, եւ աւելի իսկ քան զայդ, կ'ըմբռնէ թէ՛ հայ ծնեալին համար՝ մարդկութեան ծառայելու լաւագոյն կերպն է լինիլ ճշմարիտ հայ եւ ծառայել Հայութեան :

(Շարունակելի)

ՄԱՏԵՆԱՌՈՍԱԿԱՆ

Madame B. Chantre

A Travers

L'ARMENIE RUSSE

Paris, Librairie Hachette, 1893

ԼՆԻ ՌՈՒՍԷԼՅԱՆՍԵՆ

ԳՐԵՑ

ՏԻՄԻՆ Գ. ԶԱՆԳԻ

ՖՈԱՆՍՈՒԶԻ ՄԻ ՀԱՅՈՒՂԵԱՍ ՄԱՍԻՆ

Ահա գեղեցիկ գիրք մի :

Ֆոանսացի Տիկինն յոյժ շնորհալի ոճով գրած է զայն, և տպագրիչն ալ ա՛յնպէս սպած է և այնպիսի թղթի վերայ որ ձեւովն իսկ յայտնի է թէ գեղագէտ կնոջ մի գործն է այն :

Կարգաւով այդ զմայեալ և զմայլիչ նկարազրութիւններն՝ արդարեւ կ'արեւնայ մարդ և կը համոզուի թէ դրախտն Հայաստանի մէջ եղած ինի կամ ոչ իսկ զբան անդ, այժմ շատ դրախտներ կան անդ, և կարելի է աշխարհի քան զամենայն վեհ և հրապուրիչ երկիրն գործել զայն յապագային :

Հեղինակն յաճախ դրախտին կ'ակնարկէ իւր նկարազրութեանց մէջ : Մեղ-րի աւանին մէկ պարտիզին մէջ տօթին դէմ ապաստան դտնելու համար հանգչելով՝ Ֆոանսացի այս Եւան իւր շուրջ կը տեսնէ ոչ միայն թզենի, այլ և որթատունկ, դեղձի, նշենի, կիռասենի, սալորենի, ուռենի, կաղամախի, թթենի, ծիրանի, տանձենի, խնձորենի, նռենի և այլն : «Երկրաւոր ԴՐԱՆՏՆ, կ'ասէ, պէտք է փոքր ի չափէ նմանէր այս պարտիզին, ուր բաւ է որ ձեռք վեր վերցունէ ոք ուզած պտուղն քաղելու համար :» (էջ 143)

Պաղար-Չայի հովտին նկատմամբ ալ կը վկայէ թէ Հայաստանի և թերեւս բովանդակ աշխարհիս քան զամենայն գեղեցիկ վայրերէն մին է : (էջ 96)

Ամենազան պտղոց տեսարանն չէ միակ արժանատեսն— Տիկինն ժուռ կ'ածէ զընթերցողն տեսարանէ ի տեսարան մի քան զմի աւելի սքանչելի : Կուգան խոխոջող գետակներ, կ'երևին վեհապանծ լեռինք, կը տարածուին արգաւանդահող և շատաջուր հովիտք, դէմ կ'երևնն թանձրախիտ

և հպարտ անտառներ, կը հանդիպին մեծահասակ և քաջամարմին առջառոց հօտեր, և ահա, դա՛րձեալ լեռոն, դա՛րձեալ անտառ, դա՛րձեալ գետ. և անդէն կը սկսին բարկահայթ ընդհարմունք ամպոց և լեռանց՝ իբրեւ կատաղի և զարհուրեցուցիչ պատերազմն երկնից ընդ երկրի— և մառդ կը մնայ հիացեալ և հոգւով գետնամած :

Այդ ամենակերպ տեսարանաց մասին կարելի է երկար ու կնդրել ուղեւոր Տիկինոջ հմայիչ խօսքերուն, Սակայն մեք մասնաւոր հետաքրքրութեամբ կը խնդրեմք իմանալ թէ նա Հայաստանի բնակչաց, զանազան ցեղերուն և մանաւանդ հայ կնոջ մասին ինչ տեղեւութիւն, գաղափար կրնայ տալ մեզ :

—Ազնիւ Տիկին Շանդու, կ'աղաչեմ, անկեղծօրէն ասացէք մեզ, ի՞նչպէս գրտաք զհայ կիներ, զհայ աղջիկն. Ձինկէնէ, թաթ, ֆիւրդ, թաթար, Պարսիկ և Վրացի կիներ ալ տեսաք, բաղդատմամբ դոցա ի՞նչպէս կը դատէք զՀայուհին. գեղեցիկ է արդեօք Հայուհին— ի՞նչպէս է իւր ընդհանուր տեսքն, ճաշակաւոր է արդն ու զարդն, քաղաքավարի՞ է նիստն ու կացըն, համեմատ է վարքն ու բարքն. ի՞նչպէս են իւր աչեր յօներ, հիւէն է իւր թոյր, առողջ է թէ վատոյժ, ուշի՞մ է թէ կոպիտ : Խօսեցէք franchement, մեք անկեղծօրէն կը բաղձամք լսել կրթեալ օտարուհւոյ մի դատողութիւնն հայ կնոջ մասին զոր մեր ազգային յուսոց հզօր խորիսն կը նկատեմք :

—Օ՛, Մոսիէօ, կ'ասէ Տիկինն զուարթ շեշտով, ես մեծ հաճութեամբ կը պատասխանեմ ձեր հարցման, և կրնամ վստահացունել զձեզ թէ դուք կարող էք շատ բարձր յոյս տածել ձեր գեղեցիկ սեռին ապագային նկատմամբ : Թէ ինչպէս կը բաղդատեմ հայ կիներ իւր դրացուհեաց հետ, այդ մասին պարզապէս կ'ասեմ թէ բաղդատել չէ կարելի :

Թաթար և պարսիկ խանութներն իրենց պլանդակ ֆէրէճէի մէջ որպէս թէ ծրարուած կ'երթեւեկեն՝ ակերու համար միայն երկու ծակեր ունենալով(6) : Ի Շուշի ևս տեսայ այդ փաթութեալ թաթարուհիներ, որոց արծաթի զարդերն իրենց երաժշտական ղօղանջիւնէն գուշակեցի մանաւանդ, իսկ դէմքերն նշմարելու չարժանացայ այդ վայրենուհեաց, թէ և դիտ-

մամբ ստեղծ քաջ ձգեցի (50)։ Ես տեսայ նոյնպէս թաթար պէկի մի տիկինն որ նստաւ գետնին վերայ ծաղապատիկ տնդ ուր նստարան կար (33)։ Այս թաթար և այլ վաշկատուն ժողովուրդք աւելի մտրակէ կը վախեն քան թէ բանտարկութենէ, զի բանտն շատ աւելի յաւ է քան իրենց աղտեղի բնակարանն (120)։ Այսպիսի անասնաբարոյ կանանց վերայ մարդաբանական չափեր առնելու համար կարկին գործածելու ի՛նչ նեղութիւններ յանձն առի՝ յաճախ ի զուր, քանզի աւելի դիւրին է համոզել որ թոյլ տան իրենց գլուխ կտրելու քան թէ չափելու (23)։

Եւ երբ մեզ սիւննի գիւղ մի առաջնորդեցին, մեր յանկարծական երեւումն չանթի մի պէս սարսափ ազդեց կանանց և տղոց, և ամենն շտապաւ փախան մտան իրենց տուներն ու վրաններն (26)։ Հանդիպեցանք նաև այնպիսի վայրենի գիւղի ուր տղայք իրենց մորթն միայն ունէին իբրեւ զգետտ և կանայք էին մերկասիտ (36)։

Հայ կանանց մէջ ալ ի հարկէ տեսնուեց տեղ տեղ անկրթութիւն, յամառ դիմադրութիւն մարդաշատական գործողութեանց, նաև սնական և անձնական անմաքրութիւն, բայց բազմաթիւ մեղմ էր և սակաւագէտ։ Աւելի զարմանալի պիտի լինէր եթէ այդպիսի երեւոյթներու բնաւ չհանդիպէինք այնպիսի ժողովրդի մի մէջ ուր դպրոց և դաստիարակութիւն նոր սկսած է ծաւալիլ։

Միանգամ չյաջողելով հայ կանանց աշխատանքի բազմութեան մի լուսանկարն հանել, զի ցրուեցան ներս քաջուեցան խփոյն երբ զմեզ տեսան, գնացի գիւղին աղբիւրն, ջրուր կանայք տեսնելու յուսով, և արդարեւ հանդիպեցայ նշանաւոր անկրթութեան մի որ իմ ուշադրութիւն գրաւեց իւր գեղեցկութեամբ։ Սափորն լեցուց և կը թուէր աճապարել ի դարձ, երբ լուսանկարն հանելու բաղձանքս գիտնալով՝ մի քանի գիւղացիք փորձեցին համոզել որ կանգ առնու վայրիկ մի։ Նա ցոյց տուաւ տունն ուր իւր մանկիկ միայնակ էր և սափորն մէկ ձեռքով շնորհալի և գորտուր կերպով ուսին վերայ բռնած՝ միւս ձեռամբ զարմանալի ուժով ի բաց դարձոյց այր մարդիկն և յառաջ գնաց։ Այս կորովի տիպարն յաճախադէպ է

հայուհեաց մէջ, որք ստեղծ շնորհալիութեամբ և ձեռն գեղեցկութեամբ լծակից ունիմ անմացի բնաւորութիւն (78)։

Ամեն ուրեք Հայուհին գերազանց է իւր դրացի ցեղերուն, բայց ուրեք ուրեք ինքզինքն ալ կը գերազանցէ։ Ի Մեղրի աւելի քան ուրիշ տեղեր տեսայ գեղեցիկ տիպեր, մանաւանդ աղբիւրին տոջեւ։ Անդ կանանին յոյժ նշանաւոր է և յափշտակաւ ամենայնիւ (140)։ Աղջկունք ոմանք դիւրամտոյց էին մարդաշատական մերձեցմանց, և մին, իբր 16 տարեկան, ինքնեկ ենթարկեցաւ իմ չափմանց։ Սա կ'ընծայէր Հայուհեաց մէջ այնքան յաճախ եղող տիպն որոյ հանգամանքն են մեղմագոյն աշկունք քաջակտիր կոպերով, ոչ պայծառ թոյր, շատյլ վարսք, բաւական չեչտեալ դիմադժութիւն, և մեղմադժիկ զգոնութեան շուք մի ամբողջ դէմքին վերայ սարածուած։ Բայց երբ ժպտելու առիթն գայ, յայնժամ նոցա սեւա աչքերէն փայլատակունք կ'արձակուին մինչ մնջիկ բերանին մէջ իսկաւ կուգան սքանչելի առամունք (142)։ Աչքի դարմանի համար ամուսնոյս զիմող կանանց մէջ ևս էին որք ցարմացուցին զիս իրենց փափուկ և նուրբ գեղեցկութեամբ։ Եւ իմ քայլափոխք նոցա և ցաւով ծանրացած կոպերն կը քողարկէին անհուն քաղցրութեամբ լեցուն աչքեր... (144)։

Վրացուհիք ևս գեղեցիկ են, տեսայ անոնց մէջ նրբահասակ և բարձր, չուշանաթոյր սպիտակութեամբ կիներ (10), սակայն հայուհեաց շատն ոչ միայն գեղեցիկ են այլ և յափշտակիչ, քանզի, վրացուհեաց պաղութիւնն չունենալէ զատ, կարի սրամիտ են ընդհանրապէս, և իրենց փայլուն աշկունք ու ծաղրոն չրթունքն ցուցիչ են վերջին աստիճան նրբութեան և զուարթամտութեան (54)։

—Հայ աղջկանց երգելն ալ երբեք լինի՞ք, Տեկի՛ն։

—Այո՛, կը յիշեմ մասնաւորապէս թէ երբ յԱգուլիտ ի ճաշ հրաւիրուած էինք, կերակրոյ պահուն օրիորդներ, բարեկամ կամ ազգական մեր ասպնջական Միքայէլեանց, մտան ի սրահն խնջոյից և երգեցին սիրոյ, հայրենասիրութեան և ազգային երգեր, ի միջի այլոց ողբն Թրքահայուն որ կ'աւագէ ինքզինք Օսմանցւոց լծին տակ։ Այս հայկական երգեր, ծանր և չափեալ վսեմութիւն մ'ունին և չան

աղդեցիքն ինձ, մանաւանդ որ այս աղջկանց ձայնն թարմ և թրթռուն է: Գեղեցիկ ձայնն յաճախ է Հայոց մէջ, և արդէն նշանաւոր երգողներ ընծայած են(171):

—Տարազի և արգու զարգո՞ւ մէջ ինչպէս գտաք Հայուհին, ճաշակ կը ցուցնէ՞:

—Այդ նկատմամբ ամեն տեղ նոյն չէ: Ուրեք երկտասնեակ մի թաշկինակօք փաթաթուած գլուխներ գրեթէ քրդականի խոշորութիւն կ'առնուն, և ուրեք աւելի վայելուչ և թեթեւ է պճնումն: ոչ ինչ այնքան վայելուչ կը գտնեմ որպէս Ախալցխայի Հայուհեաց տարազն: Գործածուած նիւթերուն գեղեցկութիւնն, զգեստուց հրապուրիչ պարզութիւնն, գոհարեղինաց ճաշակաւոր ճոխութիւնն, կը յորինեն վերջին առտիճան ներդաշնակաւոր բովանդակ մի որ աւելի կը փայլեցունէ այդ կանանց ճամարտիւ նշանաւոր տիպն: Նոքա իրենց չքեղ տարագուն նախանձաւոր լինելով՝ նիւթոյ մենավաճառն իրենց վեհապահած են: Յոյժ դժուար է տեղական հիւսուածներէն և գոհարէդէններէն ձեռք ձգել, զորս հարկ է յատուկ յանձնարարութեամբ չինել տալ, զի հազիւ երբեք կարելի է գտնել զայնս ի վաճառս: Նաև պէտք է ասեմ թէ աստ, ինչպէս Հայաստանի ամեն կողմն, Հայուհիք կատարեալ տանտիկին են: Նոցա սունք սքանչելի կերպով մաքուր են (343):

Հագուստ կապուստի մասին ի Շուշի և այլ շատ տեղ տիրող հայկական սովորութիւն մի գիտեցի որ վնասակար է, այսինքն գէմքի ստորին մասին, կզակին և շրթանց վերայէն թաշկինակ կապելու սովորութիւնն: Այս մշտնջենաւոր կալ և կապն կը ճնշէ երեսին ստորին գնդերներն և վերջապէս կը պզտիկցունէ(50): Այս կապն նշանակ է անխօսութեան հին հայ օրէնքին որ կը դատապարտէ նոր հարսներն և դեռահաս կանայքն մունջ մնալու ի ներկայութեան իրենց կեսրոնց(142):

—Կը խոստովանիմ, Տիկին, թէ այդ սովորութեան այնքան զէմ չեմ: Գալով թաշկինակային սանձին, այն հարկաւոր է հլու հայուհեաց, բայց կրնար աւելի պատշաճիլ մեր այժմու գրախօս և կոկոզաբան երիտասարդաց պնդուն բերաններուն:

—Հանգիստ եղէք, մոտի՛օ, ժամանակ կուգայ, և ոչ շատ ուշ, երբ ձեր հար-

սունք աւելի կը խօսին և ձեր երիտասարդք նուազ: Հայաստանի մէջ գրեթէ ամեն տեղ յառաջդիմութեան անուրանալի տպացոյցներ տեսայ: Սովորոյթք, տարազք կը փոխուին, կը լաւագունին: Խոշոր և անշնորհ տարազն շատ տեղ պառաւանց բաժին մնացած է արդէն. դպրոցաց մէջ սանք և սանուհիք վաղահաս և զարմանալի ուշիմութիւն ցոյց կուտան:

—Ի՞նչպէս կը բացատրէք Հայուհեաց առերևոյթ արարողութիւնն:

—Այդ կարծեմ կրնայ բացատրուիլ: Այր մարդն կը հեռանայ և հինգ, տասն և աւելի տարիներ կը մնայ պանդուխտ, այդ միջոցին կինն, համբերատար պահպան ընտանեկան յարկին և խնամակալ զաւակացն՝ միշտ տխուր և անհանգիստ է բացակայ սիրելեաց համար: Այս տեսակ կենցաղ, երկրին քաղաքական դժբաղդութեանց հետ, անշուշտ տուած է նոցա մտքին խորապէս լուրջ և մեղմագոծող դարձուած, որ կը տեսնուի նաև աղջկանց վերայ: Սոքա ալ տխուր և անուշիկ են հայկական բանաստեղծութեան և երաժշտութեան նման: Բայց ես ուրիշ գիւտ արած եմ օրիորդաց պաշտօնական, պաղ և տխուր դիմակի տակ երբ առանձին և ազատ տեսակցութեան մէջ ճանաչած եմ զիրենք: Նոքա դիւթեցին զիս, յԱգուլիս, իմ հիւրասիրուած տան մէջ, իրենց գուարթուն և եռանդուն բնասորութեամբ: Ուշիմ հարցումներու տարափ մի տեղացին գլխուս որոց հազիւ կը բաւէի: Ամենն ալ ի վեր բերին խանդոս և ջերմագին բնութիւն և հազուագիւտ կամք(178): Հորապարակի վերայ ևս հայ կնոջ ներքին էութեան արտափայլումն տեսնելու առիթ ունեցայ ի Տիգրիս, ուր երեքշաբթի երեկոյներն Հայկական Գլխալին կուգան Հայերն ընտանեօք: Պարտիզին մէջ Հայոց ընտիր ընտիր կուգայ և ես մեծ հաճոյքով կը գտնէի բազմաթիւ գեղեցկութեանց մէջ աշխուժութեամբ և իմացողութեամբ գեղափայլ գէմքեր ալ(334):

—Շատ շնորհակալ եմ ձեզ, շա՛տ, Ազնի՛ւ տիկին, այս պատուական և շահեկան տեղեկութեանց համար: Մնաք բո՛ւրով:

—Երթաք բարով, մոտի՛օ, դարձեալ հրամեցէք:

—Ուրեմն ցվերոտին տեսութիւն, սիրելի Տիկին:

“Հ Ա Յ Ք”

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

1893 Տարւոյ Նոյ. 1 թուով «Յայտարարութեան» մէջ ծանուցած էինք թէ թերթս ինչպիսի ելմտական կացութիւն ունէր — թէ իբր 1100 տողար պարտք եղած էր 3 տարուան մէջ — և յոյս յայտնած էինք թէ համակրողք պիտի յօժարէին թերթս օգնութեան աջ կարկառել և գոնէ ընթացիկ տարւոյն բացն գոցել: Դեկտ. 57ին, Բալիֆորնիայ Ֆրէզնոյ քաղաքէն Մեծ. Տէր Ն. Ի. ձեռամբ ստացանք 17 տողար, զոր հանգանակած էին Մեծ. Տեարք Կ. Ն. 5 տ. Բ. Ն. 3 տ., Ս. Վ. Մ. 2 տ., Թ. Վ. 2 տ., Պ. Բ. Ս. 1 տ., Մ. Մ. 2 տ., Ն. է. 2: Ստացանք նաև Դեկտ. 5 թուականաւ, Ի ձեռն Մեծ. Տէր Բ. Իսկէնտէրի, Բարիդէն, 79 տողար 7 սէնթ. զոր հանգանակած են Մեծ. Տեարք Ռ. Մ. 26 տ., Բ. Ի. 20 տ., և այլ տասն Հարենակիցներ զանազան չափով: Ստացանք նաև Բարիդէն ուրիշ Հայրենասիրէ մի 10 տ. Մանչէսթըրէն՝ 10 տ.: Միացեալ Նահանգներէն, Մեծ. Տեարք՝ Տ. Վ. 8 տ., Ս. 3 տ., Ճ. 2, և ուրիշ հինգ հոգիք մէկ մէկ տողար:

Համագումար 134 տողար:

«Հայք»-ի խմբագիրն հրապարակաւ իւր խորին շնորհակալութիւնն կը մատուցանէ այս նուիրատու Հայրենակցաց:

ԲԱԺԱՆՈՐԴՔ 1894 ԹՈՒՆԱՎԱՆԻՆ

Մինչեւ Մարտ ամիսս, թերթիս բաժանորդաց թիւն հետեւեալն եղած է:— Ամերիկայէն 116 տարեկան և 17 վեցամսեայ բաժանորդք: Ուրիշ երկիրներէ՝ 41 տարեկան և 4 վեցամսեայ բաժանորդք:

Յոյս կայ որ դեռ վճարողներ ալ լինին և բաժանորդաց թիւն հասնի 200ի գոնէ:

«Հայք»-ի 1893 թուականին բաժանորդաց թիւն էր առաւել քան 400:

ԶԱՐՄԱՆՔ

Այս թուանշաններուն առջեւ մեր արգոյ ընթերցողաց շատք ապշած պիտի մընան: Ոմանք ալ պիտի ջանան բացատրել իրենք իրենց ասելով թէ որովհետեւ գործերն՝ մանաւանդ յԱմերիկա՝ շատ գէշ էին, «Հայք» ալ չէր կրնար անոր ազդե-

ցութենէն խուսափիլ: Այդ ճշմարիտ է. ճշմարիտ է նաև այլոց մտածումն թէ Հնչակեանք ահագին հարուած կրած լինելով «Հայք»էն՝ ամեն ճիգ թափեցին անոր բաժանորդներն պակսեցունելու, և ըստ մասին յաջողեցան: Հնչակեանց դատողութիւնն չեմք գովեր, բայց եռանդն կը գովեմք: Նոքա տարւոյն բոլոր գէշոյ թեան հակառակ, հազարաւոր տողար հանցին և դեռ մի քանի շաբաթ առաջ Լորէնսի մէջ մէկ երեկոյ մի հանգանակեցին 400 տողար: Նոյնպէս Լոնտոնի ԼԱՌԷՆԻԻ ի նպաստ տարուէ տարի 800 տողար հայթայթել յանձն առած է Նիւ Եորքի Յանձնախումբն թէպէտ գէշ լինի տարին, թէպէտ լուս:

Գաղտնիքն, զարմանքն ինչ բանի մէջ կը կայանայ ուրեմն. ինչո՞ւ միայն «Հայք» երեք տարի մրցել է յետոյ, այս տարի վտանգաւոր անսուաղութեան ըսպառնալիք կը կրէ:

Արդեօք խմբագիրն իւր թերթի համար բաւական հոգ չէ՞ տարած, մեղանշո՞ծ է իւր կոշման և պարտուց դէմ: Պէտք է որ այդ մասին հաշիւ տամք:

Նիւ Եորքի մէջ ուրիշներ ալ թերթ հրատարակել սկսան ժամանակաւ, բայց երբ տեսան թէ եկամուտն անբաւական է և հարկ է անձնական քսակէն լնուլ, դադարեցան: Իսկ «Հայքի» խմբագիրն ամեն տարի մի քանի հարիւր տողար իւր կողմէն զոհեց՝ յանձն չառնելով դադարումն: Կան երիտաւորներ որք մեզի յանցանք կը համարին զայս, ոչ թէ անձնուիրութիւն:

Աւելի մեծ ոճիր մ'ալ, ըստ ոմանց, գործեցինք, քննադատելով աս ու ան: Քննադատեցինք մեր թերթի նիւթական շահն վտանգելով, և այս ոչ յանգէտս, այլ կանխաւ գիտնալով թէ քննադատեալք բարկութեամբ պիտի բռնկէին և «Հայքի» բաժանորդներն ու համակրողք պիտի նուազէին: Յանցանքն այն եղած է ուրեմն որ «Հայք» նիւթական յաջողութիւնն նպատակ չէ գրած, և աւելի յանձն առած է թշնամեաց նետերուն դէմ կանգնիլ խղճի մտօք և յանձն առնուլ նիւթական մահ քան բարոյական անկում և անխղճամիտ լռութիւն:

Ուրիշ ոճիր մ'ալ գողցութիւնն էր զոր խմբագիրն գործեց — իւր հանգստեան, զբոսանաց և մինչև իսկ բժշկական գործերու ժամերէն գողցաւ, և տարուէ տա-

րի աւելի զողջաւ ու թերթին յատկացոյց : չէր կարող գրել այնքան յողջաւ, որբազրել փորձերն, թերթին բիւր մանր հոգերն հոգալ, և տարին իբրև 2,000 թղթակցութիւն կատարել, մէկ մասնեալսոսական յողջաւ գրելու համար գիրք մի կարդալ, քննադատական կարեւոր յողջաւ մի գրելէ առաջ ամիսներով քննել, կշռել, խօսալ, մատաւանջուիլ, տքնիլ, մորմոքիլ -- այդքան տհաճին քանակութեամբ գործ այնպիսի խղճմտութեամբ կատարել առանց բոլորովին իւր խմբագրական գործոց մէջ խորատոյգ լինելու բոլորանուէր :

Դիւրին չէ ուրեմն ամբաստանել զխմբագիրն իբրև անհոգ և թոյլ :

Գաղտնիքն ո՞ր է ուրեմն, ինչո՞ւ թերթն նիւթական այս ողբալի կացութեան արժանացաւ :

Արդեօք ազգափնտա սկզբունքնն՞ր կը պարզէ : Այդ մասին ամեն երկրէ և դասէ, նշանաւոր դրագէտներէ, եկեղեցական և աշխարհական բարձրագոյն կարգի ազգայիններէ ա՛յնքան համակրական խօսքեր և շնորհաւորութիւններ ուղղուեցան ՀԱՅՔի, որ չէ կարելի կասկածիլ թէ թերթին սկզբունքն հայրենափնտա կամ ոգին վատ եղած լինի :

Ներուի մեզ մի միայն կոչում անել աստ գրագէտ եկեղեցականի մի նամակէն 1894 Փետր. 12 թուականաւ գրուած, որ կ'ասէ «... ներքին եռանդն ու ներքին հուրն զմայլմամբ կը տեսնեմ ի Զեզ : Եւ այնքան աւելի զմայլելի և սիրելի է ինձ Զեր այդ եռանդն, որքան կը տեսնեմ զայն խոհական և բանաւոր, և միանգամայն բարեզաւատ և ճանչցող թէ ո՛րք են պայմանքն որով թշուառ ազգ մը կարող է ինքզինքը ազատել կամ ազատելու ճամբուն մէջ դնել : »

ԳԱՂՏՆԻՔՆ

Եթէ խմբագիրն ժիր և անձնուէր է, եթէ թերթն «խոհական և բանաւոր» ըսկզբունքներ կը պարզէ, և եթէ ազգին բանիբուն և բարեզաւատ անհատներն ալ այդպէս կը ճանաչեն զայն և կը գովեն -- ուրեմն ո՞ր է գաղտնիքն. ՀԱՅՔ ինչո՞ւ կ'անսուաղի :

Գաղտնիքն շատ դժուարաթափանց չէ : Մինչև ցարդ ու է ընկերութիւն կամ յանձնախումբ կազմուած չէ յատկապէս ՀԱՅՔի օգնելու համար, ալ միայն ալ

և ալ անհատք և ընկերակցութիւնք պատահարաւ օգնած են : Եւ յայտնի է թէ պատահական օգնութիւնն չի կրնար երաշխաւորել հրատարակութիւն մի որ ոչ թէ պատահական ալ պարբերական և կանոնաւոր է, և ծախքերն ալ անընդհատ են :

Մեր հասկացողութեան համեմատ, ուրեմն, ՀԱՅՔի վրանդն անկէ կը ծագի որ անոր համակրողք չեն խորհիր թէ կազմակերպեալ ուժով և կանոնաւոր կերպով օգնել պարտին անոր հրատարակութեան, և այսպէս թերթն կը մնայ պատահմանց խաղալիկ :

Քիչ չեն թուով այն երիտասարդներ որք սքանչանօք կը խօսին ՀԱՅՔի նկատմամբ, և մեծ խնդութեամբ կը կարդան անոր քննադատականներն անգամ, և կը հասկանան կատարելապէս թէ նիւթական դժուարութեանց այս տարի աւելի քան անցեալ տարի մատնուած է իրենց սիրելի թերթն, այսու ամենայնիւ զարմանալի պաղութեամբ իրարու կը նային, որպէս Յակոբայ որդիքն սովի ժամանակ, որոց ասաց վերջապէս Հայրն «ընդէ՞ր հեղգայք» նոյնպէս կարելի է ասել մեր երիտասարդաց որ նային Հնչակեաններուն, և նոցա եռանդէն օրինակ առնուն : Պէտք է գիտնան թէ Հնչակեանն աւելի գովելի է իրեն փնտասկար երեցած ՀԱՅՔին հոգին հանելու աշխատելուն համար քան այն երիտասարդն որ իրեն ազգօգուտ երեւցած և սիրելի ՀԱՅՔին հոգի և շունչ տալու չաշխատիր բոլոր ուժով :

Մերայնոց «բոլոր ուժով» չաշխատելուն ուրիշ պատճառ մ'ալ կայ. և այն է գաղտնեաց բուն յատակն : Նոքա չեն հականար թէ «բոլոր ուժով» աշխատիլ հարկ է, և չեն ալ հասկանար թէ «բոլոր ուժով» աշխատիլ կ'արժէ թերթ մի պահպանելու համար : Ուրեմն թոյլտուութիւն կը խնդրեմք այդ մասին կարճ բացատրութիւն մի տալ :

Երիտասարդք խոշոր բաներ անելու և մեծադժոգ գործողութիւններ կատարելու փափագ կը զգան բնականապէս, և անոնք որ կը հաւատան թէ Թուրքիոյ մէջ օսմ. պետութեան ահարկու և Հայաստանն ազատելու ճգնող «դիւցազանց» և վարդաններու հետ գործ ունին, բան մի չեն խնայեր, և բոլոր ուժով աշխատիլ յօժար են :

Իսկ անոնք որք կը հաւատան թէ այդ վարդաններ չունին «վարդանայ» ոչ կրօնական հաւատն և ոչ ազգային հոգին, — թէ Օսմ. պետութիւնն այդ կերպով հարուածել ոչ թէ անոր յաղթել է այլ մանաւանդ գրգռել — թէ Հայաստանն դոցա աշխատութեամբ չսգասիր այլ կը սպառի. և կը հաւատան ալ թէ բուն Հայկական հոգեով և խոհական միջոցներով փրկութեան գործն յառաջ տանիլ պէտք է, և թէ այդ հոգին արթնցունելու և այդ միջոցներն պատրաստելու ընտիր գործի մ'է ՀԱՅՔ-ն — ի վերայ այս ամենայնի չեն տեսներ որոշապէս թէ ՀԱՅՔ-ի նեցուկ և գործիւն տալ, զայն ապրեցունել և տարածել է իրենց համար առաջին և փառաւոր քայլ, յորում եթէ վրիպին, չպիտի յաջողին աւելի մեծ և աւելի փառաւոր քայլեր առնուլ:

Կը հարցնեմք մեք մեր բարեկամ երիտասարդաց սա պարզ հարցումն. — Եթէ դուք համոզուած էք թէ Հայրենեաց փրկութեան գործն «Հայք»-ի մէջ պարզուած սկզբունց հասեմատ պէտք է ղեկավարել, ինչո՞ւ չէք մտածեր թէ հարկ է կանոնաւոր օգնութեամբ պահպանել այդ թերթի, իրրեւ ձեր բերանի, գոյութիւնը: Ինչո՞ւ չէք հասկանար թէ ձեր յաղթութեան համար առաջին պէտքն այն է որ բերան մի ունենաք ձեր սկզբունքներն անդադար հշակող և տարածող: Ինչո՞ւ չէք հասկանար թէ ձեր մասնաւոր ընկերակցութեանց մէջ զանազան դամարներ պահպանելէ առաջ պէտք է պահպանէք ձեր «բերանն»: Հնչակեաններն «ընկերակցականութեան» մահաբոյր և հայաւեր սկզբունքներն տարածելու համար չորս բերան ունին, դուք ինչո՞ւ ձեր ոյժն չէք ցուցներ ձեր մէկ հասիկ «բերանն» պահպանելու մէջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այո՛չափ երկար խօսեցանք այն յուսով թէ մեր բարեկամ երիտասարդք կարող կը լինին ըմբռնել թէ գործի մի մեծութիւնն ու հրապոյրն անոր դղրդիւնէն չի չափուիր, և թէ փրկարար սկզբունքներ, Հայկական ոգի և լուրջ հասկացողութիւն ծաւալելու ծառայող «բերան» մի ունենալ և պահպանել այնքան հարկաւոր և փառաւոր գործ է որքան կարող է փառասիրել Հայրենասէր և զգօն երիտասարդութիւնն, իրրեւ առաջին քայլ:

Եւ եթէ այդ հասկանալի եղաւ, արդիւնքն պիտի լինի եռանդուն շարժում մի մեր հայամիտ և հայրենասէր դասուն մէջ ի նպաստ «ՀԱՅՔ»-ի:

«ՀԱՅՔ» ամիջակամ օգնութեան պէտք ունի: Խմբագիրն առաւել քան երբէք եռանդ և կամք ունի իւր գործ շարունակելու և աճեցունելու. նա մտադրեալ ուղեւորութիւնն ի հարկէ անել չկարէ այս միջոցին երբ թերթն իսկ ի վասնգի է: Կը հաւատայ թէ դիւրաւ հարկաւոր օգնութիւնն կարող են անել իւր համախոհք, եթէ կամեանք, 30-35 համակրողք միայն մինչեւ ցարդ հանգանակեցին, սակայն կան տակաւին հարկւր կամ երկու հարկւր համակրողներ, որք եթէ իրենց բաժին կատարեն, շուտով հաստատուն կուանի վերայ կը դնեն իրենց թերթն: Պէտք ամեն տեղ ի միասին ժողովին մերայինք և պատշաճ միջոցներ ձեռք առնուն անմիջական, արագ հանգանակութիւն անելու համար. այդ պիտի հանգանակութիւնք մէկ երեկոյի և մէկ շաբթու ջանիւք աւելլաւ կը յաջողին քան թէ երկարածիք աշխատութեամբ:

Այո՛ ամենն պարզ ասելէ և այսքան տոկունութեանէ ետեւ եթէ «Հայք» խմբագիրն ձեռնթափ լինիլ ստիպուի իւր ազգային ամենասիրելի ձեռնարկէն, առանց լողճի խայթի և առանց ամօթոյ պիտի լինի ձեռնթափ, թէ և անհուն ցաւով: Առ այժմ կը շարունակէ հաւատով և կը սպասէ անհամբեր:

ՀԱՅՔ

ՀԱՆԴԻՍ ԿՍԱՄԱՆԵՑ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ

Հասցէ

Editor of "Haik," 202 West 23d St.,
New York,

U. S. America.

Կամ Redaction de la Revue "Haik," ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեդինն է

ամեն երկրի համար

երկու տոլար կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ

Սբ. ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ Թառն էր ՎԱՐԴԱՆ: Հայրապետն արսւ զաւակ չունէր, այլ միայն դուստր մի, զոր Համազասպ՝ Մամիկոնէից Տէր և Հայոց սպարապետն առած էր ի կնոթիւն: Տիկին Համազասպ ունեալ և կրթեալ էր անշուշտ և իւր երեք որդւոց, Վարդանայ, Հմայեակի և Համազասպեանի կրթութեան լաւ հոգ տարաւ: Անդրանիկ որդւոյն՝ Վարդանայ՝ մասին գիտեմք ի պատմութենէ թէ իւր հաւուռն՝ Սահակ Հայրապետի՝ կրթական խնամքն վայելած էր:

Քաջն Վարդանայ ազգականական առնչութեանց նկատմամբ ունիմք ուրիշ անգեղութիւններ ևս: Տիկին Վարդանայ անունն էր ԴՍՏՐԻԿ: Վարդան ունէր ՀԱՄԱՋԱՍՊՈՒԶԻ անուն քոյր մի, որ Ռջտունեաց իշխան ԳԱՐԵԳԻՆԻ կրին էր: Այս կին յաշտարակէ կախուելով նահատակուեցաւ հրամանաւ իւր տոհմակից Վահան Մամիկոնէի: Այս Վահան Պարսից արքային՝ Շապուհոյ՝ Որմիզդուխտ քոյրն առած էր ի կնոթիւն և էր պարսկամիտ ոք: Սամուէլ, Վահանայ որդին, սպաննեց զիւր հայր և մայր և փախաւ զերծաւ յերկիրն Խաղտեաց:

Վրաց բռեչին՝ Աշուշա՝ Վարդանայ եղբոր քնկին առած էր՝ ի տոհմէն Արծրունեաց: Իսկ Վարդան իրեն փեսայացուցած էր զԱՐՇԱԽԻՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ՝ տալով նմա իւր դուստր:

Վարդան, սպարապետութեան պաշտօնն առնլու առթիւ այցելած էր զԿ. Պոլիս: Պատմութենէն կ'երեւի թէ ունեալ, բարեպաշտ, հաստատակամ, լուսամիտ և անկեղծ քրիստոնեայ էր՝ եկեղեցւոյ և ազգի սիրովն վառեալ: Յատենի Յազկերտի, սպարապետն միայն համարձակեցաւ խօսիլ և առարկել արքային առաջարկութեան, թէպէտ քան զինքն աւագագոյն նախարարներ կային: Վարդանայ այդ ատենախօսութեան մէջ կայ հետեւեալ անկեղծ և արի խօսքն— «Եթէ մտքիս մէջ հաստատուած վարդապետութիւնն մարդէն ընդունած լինելով իսկ՝ գիտնայի թէ ճշմարիտ է և ուրանայի, ես զիս ողորմելի կը համարէի. թող թէ օրէնքն զոր

առտուծմէ սովորեցայ, մարդ է վախնալով կամ սնտի փառաց համար ուրանայի, քա՛ւ լիցի:» Միւս նախարարք ժամանակ խնդրեցին խորհրդակցելու համար, և ատենն վերցաւ: Նոքա շատ աշխատեցան համոզել զվարդան որ իրենց հետ համաձայնի առերեւոյթ ուրացութիւնն յոնձն առնուլ, բայց չյաջողեցան: Ուրեքին առնա՛ զԱՐՏԱԿ, զիշխան Մոկաց, որ մտացի և քաջ էր և սպարապետին շատ սիրելին: Բայց նորա ալ փաստք և աղաչանք անօգուտ եղան: Ապա միջնորդ ձգեցին զԱշուշա, և նա ևս վրիպեցաւ: Ս. Գրքէն փաստեր, օրինակներ, ինչպէս Պօղոս առաքելոյն ամիլուիլն, յառաջ բերին, և երգուան Աւետարանին վերայ թէ հաւատարիմ պիտի մնան ուխտին: Վերջապէս Վարդան համոզուեցաւ: Յազկերտ ուրախ եղաւ. մեծ ընթրիք տուաւ, ուր ամեն նախարար կեղծ բան մի առաց: Սպարապետն ալ խօսեցաւ և սա պէս վերջացոյց իւր ատենախօսութիւն. «Այսուհետեւ կը հնարիմ բոլոր զօրութեամբ և ուժով՝ օգնականութեամբն Աստուծոյ՝ գործել գործ այնպիսի որ ոչ միայն առաջի ձեր Արեաց այլ և ի դրան կայսեր և այլ բոլոր ազգաց մէջ համբաւուի:»

Մոգերու բազմութեան հետ ճանապարհ ինկան սեպուհքն. միայն Աշուշա և Վասակայ երկու որդիքն — Բաբիկ և Ամիրներուհ— պատանդ մնացին Յազկերտի քով: Վասակայ պարսկաէր քաղաքականութիւնն կրնայ ըստ մասին ընծայուել այս իրողութեան. նա իւր երկու որդիքն խնայելու հաշուով կը գործէր:

Երբ հասան Հայաստան, մեծ շփոթմունք և յուզմունք ծագեցան: Վարդան զիւրայինսն կոչեց և յայտարարեց թէ— Ես ոչ ուրացայ իմ Արարիչս կամաւ կամ առ երկիւղի, և ոչ զվարդապետութիւն զոր ուսոյց և հաստատեց յիս իմ հաւս Տէր Սահակ՝ մերժեցի ինծմէ: Ես աւելի լաւ կը համարիմ որ երթամք յօտարութիւն:— Հմայեակ հաւանեցաւ: Վարդանեան գերդաստանն յուղի ինկաւ գաղթելու դէպ ի Յունաց իշխանութեան կողմն: Վասակ մարգարանն լսելով զայս՝ ի ժողով կոչեց Հայոց տանուտեարքն և որոշուեցաւ որ եկեղեցական և աշխարհական խառն պատուիրակութիւն մի յղեն Վարդանայ ետեւէն և համոզեն զայն որ վերադառնայ: Պատգամաւոր ընտրուեցան ՂԾ-

ԻՌՆԴԵՐԵՅ, ԵՆՐԺԻԱ ԵՐԵՅ(ՆՈՐՔԱՂԱՔԷՆ) և ԽՈՐԷՆ ԵՐԵՅ (ԻՄՐԵՆՈՅ)։ Երևանի տան- ուտեարաց ընտրուեցան Արշաւիր իշխան Արշարունեաց (Քաջին փեսայն), Հմայեակ իշխան Դիմաքսեանց և Գազրիկ իշխան Աբեղենից։ Պատուիրակք առին Վասակայ և այլ նախարարաց նամակներն և երգման Աւետարանն, գնացին Հասան Վարդանայ ետեւէն Արաման գիւղին մէջ։ Ինահան- գին Բագրեանդայ։ Քաջն կարգաց նամակ- ներն և պատասխանեց— Ես և իմ տունս այսպէս որոշած եմք։ Ի՞նչ կօգտի մարդ եթէ բոլոր աշխարհն չաչի և իւր անձն տուժէ։ մեք կ'երթամք անձնապուր, զի չեմք գտներ երկրին գործիչներուն մէջ Համերաշխութիւն և անձնուրութիւն։ Դուք միշտ զմեզ յառաջ կը մղէք նեղու- թեան ատեն և ձեր անձերն հեռու կը պահէք։ Մեր սոհմն է որ վշտաց և մա- հու կը դիմագրաւէ։

Պատուիրակք երկարորէն խօսեցան, վստահացուցին և վերջապէս Համոզեցին զՔաջն ետ դառնալու։ Եւ Վարդան վերա- գարձաւ։

Սպարապետն կրօնական պաշտամունք կը կատարէր առ տներն, և ապառամու- թիւն չէին յայտներ դեռ։ Ամառ եկաւ, ուրացեալք Յազկերտի զեկուցին իրաց ներքին վիճակն։ Սպարապետն ժողով գու- մարեց, բայց Վասակէն գաղտուկ, զի գի- տէր թէ սա իւր որդւոց Համար և մա- նաւանդ փառասէր խորհրդով ուրիշ գա- ղափարի կը ծառայէր։ Ոստանայ տնէն Ջանգաղան անուն ոմն, սերմն ժանտ, որ- դի անօրինութեան, իւր անցեալ շարա- գործութեամբք ծանօթ, կ'երթար իւր նմանին՝ Վասակայ՝ կը պատմէր ամեն ինչ։ Նախարարք իրազգած լինելով ձերբակա- լեցին զինքն Սրժակ գիւղի մէջ, յետոյ քարկոծելով սատակեցին։ Դարձեալ աւե- լի մեծ ժողով արին յապարհն սպարա- պետին, և եպիսկոպոսք և նախարարաց բազմութիւն գնացին առ Վասակ մարդ- պանն, որ ի հարկէ միաբանեցաւ։ աւե- տարանն կնքեցին իւրաքանչիւր տանուտէր իւր մատանիով և միաբան կարգացին դա- ւանանք մի սա իմաստով—Աստուած ճըը- մարիտ, Թագաւոր թագաւորաց և Տէր տէրամց, զքեզ կը խոստովահիմք Աստուած քաւիչ մե- ղաց մերոց, ուրացեալքս և զղացեալքս, զո- րեալքս և կեանքմեալքս, ընկալ՛ զմեզ որպէս

զորդիմ ուրացող։ Եւ ինչպէս դու զքու արիւմ թափեցիր՝ ինչպէս արցաւ համար, շնորհէ որ և մեք հեղումք զմեր արիւմ այս ուխտիմ համար ի փառս քո։ Այս ուխտն մեծ հանգիսիւ կատարեցին, որում մատնակից էին մեծ ԿԱՆԱՅՔ, և Հնչեց երկիրն բարբառով զօ- րաց բազմութեանն։

Ժողովրդեան ոգեւորութիւնն ահա- գին էր այդ ժամանակ։ Մոգպետն յուսա- Հատեցաւ, բայց Վասակ նմա սիրտ տուաւ գաղտ և զօրք բերել տուաւ մոգերուն պաշտպանութեան համար։ Մարգպանն նախարարաց մի քանին ալ իւր կողմ շա- հեցաւ խորամանկ քաղաքականութեան համար իշխօնքերով։

Հանրային ջերմեռանդութիւնն այն սա տիճան եռացման հասած էր սակայն որ չէր կրնար զսպուել այլ ևս, և հոգինե- րու սրտմտութիւնն կը խնդրէր դուրս գեղուլ կրօնի թշնամեաց վերայ։ Ոչ մի- այն քաջ արքայի և ԱՌՆԱՅԻ ԿԱՆԱՅՔ զի- նեալ կը գոռային։ Խուժեցին յապարհն մարգպանին, ջարդեցին զօրքերէն և մո- գաց բազմութեանէն, շիջուցին մոխրանո- ցին կրակն և դողացուցին թշնամիներն։

Մարգպանն այս ահաւոր հոտանքէն զարհուրելով փոխեց իւր ընթացք առ ե- րեւոյթս։ Վարդանայ առաջարկութեան համաձայնելով մի քանի աւագ իշխաններ առ կայսր ուղարկեցին օգնութիւն յԱղուա- րելու, և ապա զՎարդան ինքնին յԱղուա- նս յղեց բաւական զօրք և նախարարօք դէմ գնել պարսից զնդերուն։ Երբ այս- պէս ջերմեռանդ և ազդեցիկ նախարարաց գրեթէ ամենն ալ Հեռացոյց Հայաստանէն, սկսաւ ամենայն Հնարիւք իւր կողմ շահիլ թերահաւատներն և փառամուլներն բարձր և ստորին դասերէն, քաջալերեց մոգպե- տն, գրեց արքային, մեծ բանակ եկաւ ի Փայտակարան, և երբ Վարդան յԱղուա- նից վերադարձաւ յաղթութեամբ, գտաւ իրաց վիճակն մեծապէս փոխուած, և թէ- պէտ քաջութեամբ դէմ եկաւ Պարսից, ինքն իսկ ինկաւ ի պատերազմին որոյ ման- րամասնութիւնք ծանօթ են ամենուն։ Քաջ սպարապետն հաւանօրէն կար յիսուն տարեկան երբ մեռաւ, զի իւր փեսայն՝ Արշաւիր Արշարունի՝ քաջ նետաձիգն, ար- պէն հայ գօրավարաց թուոյն մէջ էր։

ՆԵՄՆԿ ԵԼԵՇԿԵՐՏԻՆ

Ա.

1876ին մի շշուռն կար Ալաշկերտի գաւառի մէջ, ամեն մարդ իւր ընկերի ահանջէն կը փոփոսար թէ պատերազմ կայ, յառաջիկայ գարնան Ռուսը պիտի գայ: Մինչ այդ գաղտնի լուրերն շրջում էին Հայերի մէջ, Օսմանեան կառավարութիւն պաշտօնական կերպով ամեն գիւղ լուր խրկեց թէ թուրք զօրաց մի վաշտ պիտի գայ Ալաշկերտ ձմեռելու, ամբողջ երկիր սաստիկ պատրաստութեան մէջ մտաւ, վերջապէս եկաւ թրքական բանակն: Հայք մեծ ուրախութեամբ ընդունեցին զիրենք կողոպտող հիւրերն, թէ և նեղութիւնք բազմազան էին և կեանքը վերջին աստիճան դառն, այնպէս որ հայ ժամկոչն գատարեցաւ առաւօտեան ժամ կոչելէն, հայ եկեղեցիք զօրաց մթերանոցք զարձան, սուներն և գոմեր զօրաց ձմերանոց և կերակուրի ամբարանոց: Բայց մեծ յուսով և համբերութեամբ տարին իրենց անտանելի բռն, և ընդ միշտ ինքզինքնին մխիթարեցին այն յուսով թէ Աստուած ողորմած է: Միշտ խաւարին կը յաջորդէ կենսատու լոյս: և նեղութեան՝ ուրախութիւն: զի քիչ վերջ իրենց վերայ պիտի տիրէ մի Բրիտանեայ տէրութիւն:

Գարունն եկաւ՝ հայ երկրագործն փոխան խոփ և արօր պատրաստեւ, սայլեր ձիեր սկսաւ պատրաստել, զօրաց մթերք սահմանազուխ տանելու: գարնանային ամիսների մէջ այդ եղաւ հայ մշակի դործն: Անցան երեք ամիսներ, այնուհետեւ տաճկական բանակն իւր ուղղութիւն դարցուց գէպի արեւմուտք, ինչ պէս ելաւ Ալաշկերտի դաշտէն. գրէթէ ոչ ոք գիտցաւ: Մի գեղեցիկ առաւօտ էր, ռուսական հզօր բանակն լեռ և դաշտ բռնած յառաջ կընթանար ամեն կերպով խաղաղ, ուրախ և զուարթ, մինչև հասաւ Սուքուէտ լեռան ստորոտն, թրքական բանակն սառալ ելաւ, այտ լեռան կիրճերի մէջ կատարուցաւ ամենասաստիկ արեւմտեալ մի. Ռուս թաղեց այդ կիրճերի մէջ հազարաւոր երիտասարդներ: Մինչ այտ տեղ երկու բանակը կը ճակատամարտէին: Քուրդք պատեհ առիթ գտնելով գնացին շրջապատեցին Պայազխա որ այդ ատեն Ռուսք տիրեր էին, պաշտպան զօրքը ապառտանեցան

այտ տեղի միջնաբերդի մէջ, իսկ Հայք մընացին անպատասպար. արեւմտեալ ձիւք քաշեցին իւրեանց սուրեր, մտան Հայ փողոցներ և տուններ, չխնայեցին ոչ հասակի և ոչ ալ սեռի. կարծեմ աւելորդ է մեզ գրել թէ ինչպէս հայ օրիորդք և տիկնաք խուժք խուժք գերի կը տարուէին, նաև ինչ չարաչար կերպիւ սրախոխող կը լինէին և կը ցցուէին գետին նոր հարսն և փեռան իրենց առագաստասենեակի մէջ. քանզի խումբան Հայրիկ այտ ճշմարիտ իրողութիւնք Ջալալօթի և Վառզուլթի մէջ նկարագրեք է. երբ այս աղետալի լուրն գուժեց Հայ Ալաշկերտցիին. ահ և սարսափ տիրեց զինք. և ճիշտ այտ պահուն ռուսական բանակն հազարաւոր զոհեր տալով յետ նհանջեց, երեկոյ մի բանակն լեռան ստորոտ դաշտի վերայ սփռուած էր, թրքական բանակն եկաւ շրջապատեց զինք, կրկին սկսաւ սաստիկ պատերազմ. գիշերը եկաւ մութը պատեց, թուրքք փախուստ տուաւ լեռ, ձոր և դաշտ միայն կրակի խարուկներ կերեւեային: Խեղճ Հայքն խոր արտմութեան մէջ ընկղմած ինչ ընելիքն չէին գիտեր. քանզի գիտէին թէ ռուսական բանակ նեղ ինկած էր, ետ պիտի փախէր, և արդարեւ այդպէս եղաւ: Առաւօտ եղաւ, Ալաշկերտի արեւմտեան գիւղերի Հայք չկրցին հասնիլ բանակին, իսկ արեւելեան կողմի գիւղացիք տուէն, կարասիք և ամեն բան թողնելով՝ իւրեանց ընտանեաց ձեռքէն բռնած ինկան բանակի առջև գէպի ռուսիա գնալու: Աստ կը կայնի միայն արտասուել, քանզի չկարեմ այդ ճամբորդութեան աղետալի տեսարանն նիարագրել. իրենց տեղէն և տունէն, հողէն և ջրէն, մեկնողք արտասուաթոր աչքերով, տիկնայք, օրիորդք և փոքրիկ մանկտին ամառնային արեգի կիզիչ ճառագայթից տակ, նօթի և ծարաւ, գլխիբաց և բոկոտն կը ճամբորդէին: Գիշերն եկաւ, խեղճ, թշուառ և լքեալ հայ գաղթականք տարածուեցան կանանչ խոտերի վերայ, ողբում էին կորուստն անդառնալի: Արաքսամայն սաստիկ տագնապի մէջ էին, զի լուրեր կը տարածայնուէին թէ կարէլի է քուրդ աւազակներ յարձակում անեն իրենց վերայ: Բանակն ճամբորդելու փողն փչեց, քանզի թշնամիէն սաստիկ կը հալածուէր, բացի անկէ լուր առած էր թէ Պայազխա պաշարման մէջ է և հայ բնակիչներէն շատեր կոտորուած են: Թէ և

Խարապողցի Հայերէն տմանք օգնութեան էին գնացեր բայց մեծ կորուստներ ունենալով չէին կրցեր ազատել: Կարծեմ տմեն ոք կրնայ հասկնալ թէ թշնամիէն հաւածուող և փախչող բանակն մինչ ցորեկ և գիշեր կը ճամբորդէր հայ գաղթականք ինչ դառն վիճակի մէջ էին, մթութեան մէջ զառիվարներէն իջած առեն ինչպէս ծերք և մանկտին կ'աղաղակէին կառաց անիւների տակ, Մայրեր իրենց զաւակներ գրկած կը ճամբորդէին, յանկարծ կը տեսնէին որ իրենց հագուստը հատուրք կը պակսին: Ինչ եղան, ո՞ր ձգեցին, իրենք ալ չէին գիտեր, վերջապէս անցան Արարատ լեռան շղթաներէն, Մասիսի ստորոտէն: այն արծաթազլուխ Մասիսն որ ժամանակաւ Հայոց փառքն և պատիւ կը դիտէր, այսօր այն փառաց զաւակաց նկուն և լքեալ վիճակն կը տեսնէր, և հասան Արարատեան դաշտն:

Շարունակելի
ՍՈՒՔԱԻՏ

ՀԵՆԴԻՍ

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՎԵՉ. ՀԱՅՐԻԿԻ

Ի ՊՈՍԹԸՆ

Փետր. 22ին մինչդեռ Միացեալ Նահանգք Ատլանդեանէն մինչև Խաղաղական կը տօնէին Վօլինկթօնի ծննդեան տարեդարձ, մենք Պօսթօնի և շրջակայից Հայ գաղթականներ ալ յարմար զուգադիպութեամբ կուգայինք տօնել մեր մեծ մարդն Հայրիկ և լսել նորա անդրանիկ և ողջոյնալի կոնդակն:

Բազմութիւն առենին արդէն հաւաքուած էր (Grand Army) սրահն, ուր տեղի պիտի ունենար հանդէսն: Սրահն չքեղապէս զարդարուած էր նախապէս որոշեալ մասնախմբի մը հոգատարութեամբ: Հայրիկի մեծաւիր պատկերն ծաղկօք և պսակօք պատեալ՝ չքեղ եւ յաղթական իմն կը փայլէր սրահին ճակատը, Հայրիկի դէմ յանդիման կը կենար անմահին ներսէս վարժապետեանի քնքոյշ եւ գեղեցկատեսիլ նկարն:

Հանդէսն սկսաւ կէսօրուան ժամը 3ին, ընդ նախազահութեամբ Պատ. Ի. Խաչումեանի, Պատ. Խաչումեան ժողովը

բացաւ հակիրճ սակայն կարի իմաստալից բանիւք, երեւան բերաւ Հայրիկի արժանիքը, եւ ըսաւ թէ, «Ազգի մը մեծութիւնը կախեալ չէ նորա քանակէն այլ նորա արտադրած մեծ անձնաւորութիւններէն, ցոյց տուաւ նաեւ էջմիածնի գոյութեան կարեւոր եւ մեծ նշանակութիւնը: Խօսք տրուեցաւ Պրն. Գառնիկ Գալէմբերեանի, որ Ամերիկեան յեղափոխութենէն մէկ քանի տկերներ երեւան ածեց. Հայրիկ եւ Վօլինկթօն այս երկու մեծ անձնաւորութիւններ իրարու հետ բաղդաւանց, Երրորդ մը Հայրիկի համառօտ կենսագրութիւն կարգաց, ծանրանալով Հայրիկի քաղաքականութեան վրայ, թէ «Պէտք է ժողովուրդն կրթել իմացական եւ բարոյական ուժերով զօրացնել, որ պէս զի զօրանայ, պնդեանայ եւ բարձրանայ. թէ Հայաստանի երջանկութիւնն կը կարօտի Հայ ազգի անհատական զարգացման: Վ. Քաջբերունի արտասանեց «Ազատ Աստուած» բանաստեղծութիւնն, իսկ Պրն. Խորէն Անդրէասեան հեղինակած էր «Առ Հայրիկ» ուղղեալ բանաստեղծութիւն մը: Հանդէսն քաղցր և վսեմ տպաւորութեան տակ փակուեցաւ: Հետեւեալ օրն տեղական երեք մեծ թերթեր գովեստիւք խօսեցան սոյն հանգէսին վրայ:

ԱՐԳՈՍ

Բանտէն ազատուած Հայ մի գրած է «...Արդարեւ ոոսկալի արկածներէ անցանք, որոց երբէք չէի կարծեր որ պիտի դիմանամ. բայց սիրական ազգիս քաղցր սէրը միշտ քաջութիւն և խրախոյս կը ներշնչէր յիս. ինչ որ կարգացիք տառապանաց և մեր բանասակից եղբարց շարք չարանաց մօտին՝ բոլորը ճիշդ են, չափազանցութիւն չկայ:

Կրնամ երեւակայել թէ ինչ անձկութեամբ հեռեւեցաք իմ և ընկերներու մահու չափ սեւ օրերու տխուր պարագային: Շատ շնորհակալ եմ Ձեր բոլորի և բոլոր իմ շնորհակալութեանց եւ խնդակցութեանց համար: Իցի՛ւ, մեր բոլորի վիճակակիցներն ոյն բաշղը ունենային, հօգիս ու սիրտս միշտ անոնց հետն է. մաթենք որ Տէրը իր դատաստանը շուտ յայտնէ եւ այցելութիւն անէ մեր տառապեալ ազգին...»

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կտմ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E. (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր։

FRANCOIS FRENTZ

ԱՌՍՁՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27th և 28th փողոցաց միջև

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

NATIONAL MUTUAL
INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

Բ.Օ.Գ.ԸՅԻՆ ՓՈԽԵԴԵՐՁ

ԿԵՆՔՑ ԸՊԸ ՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել
է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը
քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշ-
կին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ
տարին այսչափ թալէս, 20 կամ 30 կամ
աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր
ժառանգորդը կ'ընդունին հազար թալէս,
եթէ պայմանն հազար թալէսի է, կամ
մինչև հինգ հազար թալէս, ըստ պայմա-
նին։

Երբ մէկը այսօր անգամ ընդունուի,
և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ,
և գծաղդարար վաղն մեռնի, պայմանա-
գրեալ հազար կամ աւելի թալէսն կը
վճարուին ընկերութեանս կողմանէ այն
ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն
կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողներու
«Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի անգե-
կութիւն տալ

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7th Էվինիու Նիւ Եորք

26th և 27th փողոցներուն միջև

Դեղագրքեր կը շինուին խնամով

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Յ. Է. ԲԻ. ՕՆԵՆ

EKIZIAN BROTHERS

30 Eddy St.

Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի զոչողութիւններ աւնեմք:

Անոնք որ կը կտրօտին ստակի փոխադրութիւններ անել՝ դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք զոչացուցիչ զերպով:

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուղարկութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք:

Գ. ՏԷՕՒՐՄԷՆՆ

ՅԱՆՁՆԱԿԱՍԱՐ-ԳՈՐԾԱԿԱԼ

Ի ՌՈՒՍՃՈՒՔ

Պատիւ ունի ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ պատուարժան ազգայնոց թէ՛ բացի ամեն տեսակ (հայ լեզուաւ) գրեանց և զանազան պատկերներու յանձնակատարութենէ՝ ստանձնած է նաև գործակալութիւնն հետեւեալ հրատարակութեանց.

ԱՐԱՔՍ վեցամսեայ պատկերազարդ. ՀԱՅԲ կիսամսեայ հանդէսներու և ՀԱՅՐԵՆԻՔ ամենօրեայ թերթի:

Յանձնակատարութիւնք կը կատարուին արագ և կանոնաւոր կերպով:

Վճարմունք կանխիկ են:

Հասցէ — K. DEUKMEJIAN
Roustehouk, BULGARIE

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձեւերով բայ՝ սրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊՍԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»-ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Գաղաքականութեան վերայ հանրային ուղարկութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն: Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

ԱՐՈՒԵՍ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21

դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատրնտիր ընթերցուածոց, երկաթի թիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէս կամ 5 ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լու յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ